

Պէտք է ձգել ընկեր Մաթիկը, որ իր երազը դիւցազ-
ներգէ: Անիկա, ապագայ յեղափոխութեան հոյակապ
«տեսանող», արդէն սնանկ էր յայտարարած Բաֆֆին
եւ անոր «Կայծեր»ը, որ «մի սմսեղուկ խալիա էր եւ ուրիշ
ոչինչ», արդիւնքով, այսինքն՝ ջարդերովը կրկնակի
դատապարտուած:... Բայց այդ գալիք մեծ օրէն առաջ,
անոր կ'իյնար պարտք, գիտական անվրէպ «հիմունքների
վրայ» ճշդել տարողութիւնը մեր ուժերուն, որոնց
հիմնականը անշուշտ թիւն էր կազմելու: Ռոմանթիզմ
էր, անոր կարծիքով, մեր թշնամին մի շատ լաւ, խորը
չուսումնասիրած շարժումներ սարքել, որոնք յանգելու
էին անխուսափելի աղէտի: Ռոմանթիզմ էր, անհատա-
կան դիւցազնութիւնը ընդարձակել իր իմաստէն անդին,
տարածելու համար զանգուածին ալ վրայ, որ, տգէտ ու
անկազմակերպ, կը մնար անշահագործելի ու կ'երթար
զոհ թշնամուն, որ առնուազն պետական կազմակերպու-
թիւն մը ունէր իր կռնակը:

Ընկեր Մաթիկ կարդացած էր հակայեղափոխական
գրականութիւնը, գիտական լայնամտութեամբ մը ու չէր
անտեսեր այդ յարձակումներուն մէջ բանաւորին ալ
բաժինը: Ու չկրկնելու համար ջարդերով պսակաւոր մեր
ռոմանթիզմը, անիկա կը հաւատար գիտական մեթոտին,
որ խորահափումն է թշնամին, իր ամէն ծալքերուն:

Ո՛վ լրջութիւնը բոլոր Մաթիկներուն, երբ թուղթի
վրայ կը չափեն ու կը ձեւեն թուրքին ծնունդներն ու
ախտավարակները եւ կը կարծեն ծառայած ըլլալ մեր դա-
տին, թուրքը ցոյց տալով ցած ինքնիրմէ: Որոնք 4-5 մի-
լիոնի կ'իջեցնեն թիւը հարազատ թուրքերուն ու սիֆիլի-
զին զոհ ցոյց կու տան սերմերն ու արգանդները:

Կ'անցնիմ այս դժնդակ եղջերուաքաղին վրայէն, ո-
րոնք բոլոր ժամանակներու Մաթիկները կ'ընեն իրարու
նման:

Կարի՛ն:

Յետո՞յ: